

չինուածս, ոպ. ասէ տրն, մի մնացէ քար ի վր. քա-
րի, որ ոչ քաքտեսցի. եւ զայս կատարեցաւ լիապէս
յայսմ ժամկի. եւ մնաց անապատ եւ ամայի, զի ոչ
գոյր հնար եւ եթէ ոք ըզմայր գնալ յերկրպագութի.,
ոչ կարէր, եւ հաւատաւոր երկիրպագօղքն եւս ար-
գելիւ, մնային տոչորեալ սրտիւ: Եւ յաւուրս չրժման.
Ստեփաննոս բարունին էր ի մայրաքա//

563ա. զաքն Երեւան ի յանապատն սր. եւ ի հա-
սարակաց ճաշու աղօթս կատարէին հանդերձ միարան
ուխտին. յայնմ ժամու շարժեց. եւ քակտեցաւ եկեղե-
ցին, էառ զտակ զեպիսկոպոսն զՍտեփաննոս եւ զքաջ
հռետրն, եւ անտի փոխեցաւ առ Քս, որ եւ արդարա-
դատն մի յիշեսցէ զանցս նր. ի միւսանգամ զալստեանն
իւրոյ:

Եւ յետ նր. փոքր Դաւիթ՝ եղբօր որդի մեծ Դաւիթի
եւ Ստեփաննոսի. չեւ եւս էր առել. աստիճան եւ կարգ
քննութե. ալլ տիօքն էր մատաղ եւ հասակաւն տհաս,
սակայն հոգւովն արի եւ մտօքն զուարթ, սրտովն քաջ
եւ զործովն արդիւնարար, զի ոչ երկեց. ի տհասութե.
հասակին, եւ ոչ երկմտեաց ի խոսկանացել. եւ յանա-
պատացեալ տանէն, եւ ոչ կասկածեց. ի բռնակալութէ.
իշխանաց ալլաղբեաց եւ ոչ երկիւղ իմն քաշեաց ի սե-
ւաթուր պսակաց (!) զնդից կամ պարտուց պարտա-
պետաց, ալլ հոգւովն էր իբրեւ զմրդրէն. Դաւիթ, որ
ինքն անհմուտ գոյով պատերազմի, զքաջայաղթոյն
Գողիարդէ ոչ երկեաւ, ալլ իբրեւ զորս երէց պարտա-
քարիւ հնար: սապէս ըզմ. հնարագէտք եւ խոհմա-
գոյնք եւ իշխանական պատուով պատուեալք, որք էին
երեւելիք եւ անուանիք, մինչ զանունս նոցին ի սեղանս
արքունուց խօսէին յարակայ, հակակեցան. (հակառա-
կեցան ?) ի մանուկ Դաւիթիս պատրուղական բանիւ,
պատեալ ունէին յինքենս. մորթովն ոչխարի եւ ներ-
քուստ պատառել կամէին իբրեւ զդալլ գէշաքձիւծ (!),
կոչէին քաղցր լեզուաւ, եւ սիրտք նց. ոչ էին ուղիղք
եւ զի կամէին մի եւս լիցի ի սեռէ եւ ի տոհմէ նոցին
վերադիտող եւ առաջնորդ ամաղէն. նիզակին, ալլ Դա-
ւիթս ալլ ոչ ի խոստմանց պարգեւացն պատրեցաւ, ալլ
բանիւ քաղցրութիւն. ի յինքն ստացաւ զսիրտ սրբակրօն
եւ ամարան. վրդպին. Միքայէլի, որ էր յայնմ տար-
ւոջ տեղապահ եւ աթոռակալ Յակոբ կթղկոսին. եւ
կթղկան. էր ի տանն Յունաց, եւ Միքայէլս ալլ առել.
դիւաւիթս, տարաւ ի գիւղն յենկիճայ, յաւուր ալլա-
կերպութեն. Քի. եւ ձեռնադրեաց քննական. պատուով
ի սոյն ամի շարժի, եւ առաքեաց ի վանքն ամայացեալ.
վս. զի կարի էր քաջքայեալ եւ զժուարահարթ լեալ.
մինչ տեսողացն ոչ էր հաւատացել. եթէ դձլ. մար-
դարնակ լիցի տեղին. քանզի հանճար մարդոյ ոչ ըն-
դունէր զայսպիսի բան, զի արքունուստ միայն վայել
է անհնարինս հնարացուցանել, մանաւանդ ի մեռանիլն
զՍտեփաննոսին՝ Ծ. թումն. պարտք եւս եթող վանից
վր, եւ պարտատեարքն էին ամքն. բռնաւորք եւ ալ-
լաղբիք՝ յաւէտ տոկոսախնդիրք եւ շահակերք, ով ոք
հաւատայր թէ պարտուցն ազատիլ կարիցի, թող թէ
առնել չինութիւն. տանն. ալլ հայրն Ած. զհայրական

զթովն, եւ որդին Ած. զանբաւ մարդասիրութիւն. եւ
հոգին Ած. փշմամբ շնորհիւն ետուն յաջողումն եւ յա-
ջողումն ըստ գործս սորա, որ իբր զհեղեղ հեղեղեալ
զդարս, զփուլս, զբլուրս, /

563բ. զդաշտս եւ զառապարս ողողեալ հաւաքէ
զծովս ընու, նոյնդունակ եղեւ յաջողումն սորա ի
խնդրոյ եւ ի յըզձից սրտից, որում ասէ, խնդրեցէք,
զի գտցիք, հայցեցէք եւ տացի. արդ եւ բախեաց զդունն
փղձկեալ սրտիւ եւ դիւրալուր տրն. բացաւ զդունն ու-
ղորմութե. ի դէմս իւր, որ եւ ամ. հաւատացելոց իւ-
րոց բացցէ զողորմութե. դունն ոպ. բացաւ ի Դաւիթիս
այս եւ քաջիմաստ վրդպիս:

Եւ յառաջնումն ամի քննութե. իւրոյ ետ զամ.
պարտս եւ ազատել. ի պարտուցն. նա եւս պողոտայք
ճանապարհք հորդել. չինեաց, որ ամ. զբաստք կարէին
գնալ: Եւ յերկրորդ ամին ձեռնարկեց. չինուածոց
շնորհիւն Քի: Եւ մինչ էր սկսել. չինութե. տան եւ
այգեւտանեցն, փոխեցաւ առ տր. Յս. սրբապան
կթղկան. Յակոբ ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս, եւ
Միքայէլն ի ձորն Շամպոյ՝ ի վանքն սր. Նախավկայի,
եւ մնաց աթոռ հայրպտութեն. անտերունչ տարի մի:
Եւ զայս տեսել. արեւելեան վրդպտցն, որ ոչ գտան ոք
եթէ նստցի աթոռ կթղկոսութե., ժողովեցան ի մի
վայր ամ. սեւաթուրք. ընտրեցին զՊետրոս քաջ բա-
րունին, զեպսն. ի տան Գողթեան՝ եւ առաջնորդ առա-
քելոյն Թումայի. առաքեցին հրովարտակաւ եւ աղա-
չանօք առ լուսանկատ եւ արդիւնարար սրբապան
կթղկոսն. Եղիազար հրաւիրակա, բերել եւ նստուցանել
առաքելաշնորհ աթոռն Լուսաւորչի. որ եւ եկն իսկ.
եւ ի գալն նր. զղղղումն եղեւ համայն արեւելեանս,
որ եւ անարհու եղեն աղքն մահմետականի, եւ ի թուոյ
հայոց՝ ՌձԼԱ, յաւուր վերափոխման սր. Ածածին.
կիրակին նստաւ զահոյն Լուսաւորչի. եւ վարէր բունն
իշխանութիւն. եւ հոգեւոր առաքելութիւն. զի եւ զսա տրն.
բնաւից արժանի արասցէ սրբոց հյրպոյն. դասուց:

Եւ յերկրդ. տարւոյն, որ թիւն էր փոխարկել.,
ՌձԼԲ. մտել. զառաջաւորի բրեկենդն. կրկի. օրն կո-
չեց. ինքնին սրբոյն. կթղկոսն. Եղիազար գտէր Դաւիթ
տէրն Գեղարդայ, ետ գաւաղան իշխանութիւն. վրդպեւ.
եւ ի միւսում կիրկի. օրն ձեռնադրեաց եպս. ի վր. իւր
սեպհական տանն Գեղարդի, կոնաւակաւ եւ իշխանութիւն.
լինիլ ի վր. թեմի եւ վիճակին: Եւ զկնի զօրացաւ, ճո-
խացաւ, օր ըստ աւուր երեւելի եւ անուանի եղեւ ի
մէջ բաղմաց. մինչ զի ի մահմետականաց միջի պտիւս.
մեծս եւս ունէր. եւ ինքն էր լայնանդամ, տեսօքն զե-
ղեցիկ, կերպրնօքն. վայելուչ, մտօքն ճարտար, խո-
հմ եւ խորհրդական, հանճարեղ եւ զխոնական, ճո-
ռոմախօս եւ ատենարան եւ չնարար իսկ: Յայնժամ
մտել. եղեւ ի մէջ չինութե. աներկիւղ եւ անկասկած,
իբրեւ զքաջ պատերազմող թղր. որ ոչ երկնէի ի պա-
տերազմէ, եւ ինքնին վարէ զիսումբս պտրդմի. նոյն
դունակ ընդվզեալ եմուտ ի խախտել. եւ ի փլել. տանս
նորոգման. արար եւ սկսել. չրջապատ բարձրաբերձ
պարիսպ. տաշել. քարով հաստատուն եւ ամուր պինդ.
նաեւ չինութիւն//